



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 16

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.04.2016թ. թիվ 16 նիստի արձանագրային որոշումը, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 2781108 վկայականը, համայնքի ավագանու որոշումը համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման ներքին ցանցը և օրվա կարգավորիչ ջրամբարները իր կառուցման սպասարկման համար զբաղեցրած հողամասով անհատույց նվիրատվության կարգով տրամադրելը Հայաստանի Հանրապետությանը ի դեմս Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ին: Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ, 89-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 որոշման պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լեռնավան համայնքու գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման ներքին ցանցը և օրվա կարգավորիչ ջրամբարները իր կառուցման սպասարկման համար զբաղեցրած հողամասով անհատույց նվիրատվության կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը ի դեմս Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ին:

2. Հայաստանի Հանրապետության ի դեմս Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել վերը նշված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ՎԱՀԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

գ.Լեռնավան